ՔՐԻՍՏՈՍԻ ԿՅԱՆՔԸ՝ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՂՈՒԿ. 10:25-35

25 Եվ ահա մի օրենսգետ վեր կացավ և նրան փորձելու համար ասաց. Վարդապե՛տ, ի՞նչ անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ: 26 Հիսուսն ասաց նրան. Օրենքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս ես կարդում: 27 Նա պատասխանեց և ասաց. Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ զորությամբ ու քո ամբողջ մտքով (Բ Օր. 6.5) և քո ընկերին, քո անձի պես (Ղևտ. 19.18): 28 Եվ նրան ասաց. Ճիշտ պատասխանեցիր. դա արա՛ և կապրես:

1. <u>ՎԱՐԴԱՊԵ՛Տ</u>, Ի՞ՆՉ ԱՆԵՄ, ՈՐ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԺԱՌԱՆԳԵՄ:

2. ՕՐԵՆՔՈՒՄ Ի՞ՆՉ Է ԳՐՎԱԾ:

3. ԻՆՉՊԵ՞Ս ԵՍ ԿԱՐԴՈՒՄ:

Եփ. 2:8-9 – Շնորհով եք <u>փրկվել</u> հավատի միջոցով, և սա ձեզանից չէ, այլ Աստծու պարգևն է: Ոչ էլ գործերից է, որպեսզի ոչ ոք չպարծենա:

- ***Հարցն այն է, թե ինչի՞ց ենք մենք փրկվել:***

  Հռ. 6:23 – Որովհետև <u>մեղքի հատուցումը</u> <u>մահն է</u>, իսկ Աստծու շնորհը՝ հավիտենական կյանքը մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:

- ***Հիսուսի առաջին գալստյան պատճառը:***

  Մատ. 1:21 – Նա որդի պիտի ծնի, և նրա անունը Հիսուս պիտի դնես, որովհետև նա իր ժողովրդին պիտի փրկի իր <u>մեղքերից</u>:

  Ա Հով. 4:9 – Աստծու սերը մեր հանդեպ նրանով երևաց, որ Աստված իր միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպեսզի նրանով ապրենք:

29 Իսկ նա՝ որովհետեւ կամենում էր իր անձն արդարացնել՝ Յիսուսին ասեց. եւ իմ ընկերն ո՞վ է:

4. ԻՄ ԸՆԿԵՐՆ Ո՞Վ Է:

*30 Հիսուսն ասաց. Մի մարդ Երուսաղեմից Երիքով էր իջնում և ավազակների ձեռքն ընկավ: Նրանք էլ նրան մերկացրին, վիրավորեցին ու կիսամեռ թողեցին գնացին: 31 <u>Պատահմամբ</u> նույն ճանապարհով մի **քահանա էր իջնում**, որը, նրան տեսնելով, շրջանցեց: 32 Նույն կերպ մի **ղևտացի էր այդտեղով անցնում** և տեսնելով նրան՝ շրջանցեց: (Play the pictures)*

Ծննդոց 9:22-23 – 22 Քանանի հայրը՝ Քամը, տեսավ իր հոր մերկությունը և դրսում պատմեց իր երկու եղբայրներին:

23 Սեմը և Հաբեթը հանդերձն առան և իրենց երկուսի ուսերի վրա դրեցին ու ետ-ետ գնալով՝ ծածկեցին իրենց հոր մերկությունը. նրանց երեսները դեպի ետ էին, և նրանք իրենց հոր մերկությունը չտեսան:

*33 Մի ՍԱՄԱՐԱՑԻ էլ, որ ճանապարհորդում էր, եկաւ այնտեղ եւ նորան տեսնելով **գթաց**: 34 Մոտեցաւ, նրա խոցերը փաթաթեց՝ վրան **ձեթ** ու **գինի** լցնելով. եւ **իր անասունի** վրա դրած՝ նրան մի իջևանատուն տարաւ եւ նորան հոգ տարաւ: 35 Հաջորդ օրը երկու դինար հանեց, **իջևանատիրոջը** տվեց ու ասաց. Խնամի՛ր նրան և ինչ որ ավելի ծախսես, ես մյուս անգամ վերադառնալիս կվճարեմ քեզ:*

5. ՀԻՄԱ ԱՅՆ ԵՐԵՔԻՑ Ո՞ՐՆ Է ԵՐԵՒՈՒՄ ՔԵԶ՝ ԹԷ ԸՆԿԵՐ Է ԵՂԵԼ ԱՅՆ ԱՎԱԶԱԿՆԵՐԻ ՁԵՌՔ ԸՆԿԱԾ ՄԱՐԴԻՆ:

37 Նա ասաց. Նա, ով ողորմություն արեց նրան: Ապա Հիսուսը նրան ասաց. Գնա՛, դո՛ւ էլ այդպես արա:

- ***Աստված ողորմություն է ցանկանում:***

  *Մատթեոս 9:13–Գնացեք սովորե՛ք, թե ի՛նչ է նշանակում **Ողորմություն եմ ուզում** և ոչ թե զոհ" (Ովս. 6.6). որովհետև ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ մեղավորներին:*

  Միք. 6:8 - Քեզ հայտնել է, ո՛վ մարդ, թե ի՛նչն է բարի, և Տերն ի՛նչ է պահանջում քեզանից. միայն իրավունքը պահել, ողորմություն սիրել և խոնարհությամբ ընթանալ քո Աստծու հետ:

  Մատ. 5:7 - Երանի ողորմածներին, որ նորանք ողորմութիւն կգտնեն:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ